

## ՏԵՂԵԿԱՅՈՒՄ

Մարզահովիտ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Մարզահովիտ	Ավագանու արտահերթ նիստ	20.02.2020թ.	12:00	Մարզահովիտի համայնքապետարանի նիստերի դահլիճում (գ. Մարզահովիտ, 2 փողոց 23)

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. փետրվարի 20-ին՝ ժամը 12.00-ին Մարզահովիտի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

**ժամը՝ 12.00**

1. Մարզահովիտ համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 20-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ս. Անանյան

2. Մարզահովիտ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան եվ զարգացման հնգամյա ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին

զեկ. Ս. Անանյան

3. Մարզահովիտ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ա. Խառատյան

4. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

զեկ. Ա. Խառատյան

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Մարգահովիտ համայնքի  
ավագանին որոշում է.

1. Մարգահովիտ համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 20-  
ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ս. Անանյան

2. Մարգահովիտ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան եվ զարգացման  
հնգամյա ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին

զեկ. Ս. Անանյան

3. Մարգահովիտ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը  
հաստատելու մասին:

զեկ. Ա. Խառատյան

4. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն  
հատկացնելու մասին:

զեկ. Ա. Խառատյան

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019  
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ  
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. ԳՈՀԱՐ ԿՈԾԻՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ Մարգահովիտ համայնքի ավագանին.

որոշում է՝

1. Հաստատել Մարգահովիտ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել 2019 թվականի Մարգահովիտ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 2-ի:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատվելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակել [www.azdarar.am](http://www.azdarar.am) հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. ԱՎԱԳ ԽԱՌԱՏՅԱՆ*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման մեթոդական ուղեցույցը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ 2020)՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՀԱՊԱՀՈՎ  
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՎԱԳ ԽԱՌԱՏՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները.

Մարզահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի,
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: